

# ԴԱՇՆԱԿՆԵՐԸ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՅԻ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐՆ ԵՆ

Դաշնակցությունը, որպես հայ խոչոր, ռեակցիոն բուրժուազիայի պարտիա, միշտ հանդես է եկել և հանդես է գալիս հայ ժողովրդի արմատական շահերի դեմ: Այդ դավաճանական պարտիան պատմությունից դուրս շրջադրված լինելով Հայաստանում Սովետական իշխանության հաղթանակով, և ոչ մի հենարան չունենալով հայ ժողովրդի մեջ, հանդես է գալիս ամերիկա-անգլիական իմպերիալիստների լակեյի դերում, կատարելով իր տերերի ամենակեղտոտ առաջադրանքները: Ներկայումս դաշնակ բաշխողները կապիտալիստական աշխարհի զանազան երկրներում պրոպագանդում են ամերիկյան միլիարդատերերի ազդեցիկ պլանները, խունկ են ծխում ԱՄՆ-ի ազդեցիկ քաղաքականության առջև, ակտիվորեն մասնակցում են դեմոկրատական շարժման ճնշմանը:

Այդ հուղանների բարոյական անկումը հասել է այն աստիճանին, որ նրանք բացեիքաց, առանց բաշխելու մարտնչում են ֆաշիստական թյուրքիայի հետ դաշինք կնքելու համար և պատրաստ են թյուրք ռեակցիոներների հետ միասին արշավանք սկսել Սովետական Հայաստանի դեմ: Ճաշխատական վիժվածք Դարբինյանը դաշնակցան մամուլի էջերում հանդես է գալիս մի ամբողջ հոգվածաշարով, որտեղ փորձում է հիմնավորել և արդարացնել դաշնակների տակտիկան, թե ինչու իրենք պետք է թյուրք էնիշերի հետ միասին հանդես գան Սովետական Հայաստանի դեմ:

Իր հակասովետական, հակաազգային գործերում Դարբինյանը հասնում է այնտեղ, որ ամերիկյան և թյուրքական ազդեցություններին կոչ է անում Սովետական Հայաստանի տերիտորիան բռնությամբ անջատել Սովետական Միությունից և մտցնել թյուրքիայի կազմի մեջ: Դաշնակ բաշխողները հույս ունեն, թե ԱՄՆ-ի և Անգլիայի օգնությամբ, այսինքն այն երկրների,

որոնց կառավարող շրջանները միշտ հանդես են եկել հայ ժողովրդի շահերի դեմ և շատ անգամ են դավաճանել նրան, կկարողանան թյուրքիայի կազմում ստեղծել ռազմային օջախ, որտեղ նրանք՝ դաշնակ լիդերները ղեկավար դեր կխաղան: Ահա թե ինչպիսի լկտիստական են հասել դաշնակ լակեյները, որոնք ոչ միայն հանդես են գալիս հօգուտ դաշինքի հայ ժողովրդի դարավոր թշնամի թյուրքական ռեակցիայի հետ, ոչ միայն պատրաստակամություն և փութաշանություն են ցուցաբերում հայերի արյունը թափելու թյուրքական յաթաղանով, այլև թյուրքական ֆաշիստներին հանձնելու հայերի սրբազան հայրենիքը:

Դաշնակների հակահայկական վարքագիծը դարմանք չի պատճառում արտասահմանյան հայ աշխատավորներին, որովհետև նրանք լավ են ծանոթ դաշնակների շարագործություններին, պիտեն, որ դաշնակները միշտ հանդես են եկել հայ ժողովրդի ազգային շահերի դեմ, որ ֆաշիստական լիդերները իրենց սննդական բարօրության համար միշտ ՅՕ բռնաբռնվ վաճառել են արտասահմանյան հայ աշխատավորների շահերը, դառնալով նրանց լակեյները, ովքեր ավելի շատ են վրձարել իրենց ծառայությունների համար:

Դաշնակների սանձարձակ հակահայկական գործունեությունը, նրանց առևտուրը իրենց իմպերիալիստական տերերի հետ, նրանց ելույթը հայերի անունից՝ զայրույթ և բողոք է առաջացնում արտասահմանյան հայ աշխատավորների մեջ, որոնք հակահարված են տալիս դաշնակներին, մերկացնում են նրանց որպես դրայարտիներ և հայ ժողովրդի դավաճանների: Արտասահմանի հայ առաջադիմական ու դեմոկրատական մամուլը մեր օրերին վճարար պայքար

է մղում դաշնակների ռազմամուլ և թյուրքասեր գործունեության դեմ: Արտասահմանյան «Լրաբեր», «Սուրիա», «Նոր կյանք», «Նուարձակ» և այլ հայկական թերթերը դաշնակ լիդերներին մերկացնում են որպես հայ ժողովրդի թշնամիներ: Նրանք ցույց են տալիս, որ դաշնակների այդ շեֆերը դաշնակցության գոյության ամբողջ ընթացքում հանդես են եկել որպես հայ ժողովրդի սուր դավաճաններ: Այդ թերթերը, պատռելով նրանց դիմակը, ցույց են տալիս, որ դաշնակները թյուրքերի դաշնակիցներն են և հանդես են գալիս հօգուտ թյուրքական ռեակցիոներների շահերի:

Արտասահմանյան հայկական պրոպագանդիստները բերում են բազմաթիվ փաստեր, որոնք հաստատում են դաշնակների համագործակցությունը թյուրք ռեակցիոներների հետ: Ահա դրանցից մի քանիսը:

Հայ ժողովրդի դավաճանները, որոնք տնտեսական և քաղաքական լիակատար սնանկության էին հասցրել Հայաստանը, երկրում Սովետական իշխանության հաստատումը կանխելու նպատակով դեռ 1920 թվականին մերձեցում էին հաստատել հայ ժողովրդի դարավոր թշնամի թյուրքական կառավարության հետ: Այն ժամանակ տապալված դաշնակցական կառավարության պրեմյեր-մինիստր Միմոն Վրացյանը թյուրքական զորքերի հրամանատար Քյազիմ Կարա Բեքիրին հասցեագրած հեռագրով օգնություն էր խնդրում Կարմիր Բանակի դեմ կռվելու համար, որը օգնության էր եկել Հայաստանի Ռեյոլցիոն կոմիտեի հրավերով: Երբ դաշնակներին չհաջողվեց այդ գործարքը, նրանք կնքեցին Ալեքսանդրապոլի հրեշավոր, ստրկացուցիչ պայմանագիրը, որը նշանակում էր Հայաստանի անկախության լիակատար ոչնչացում: Դաշնակները թյուրքերի հետ այդ խաչատառակ գործարքը կնքեցին Հա-

յաստանում Սովետական իշխանություն հաստատվելուց հետո, որպեսզի նոր պատերազմ առաջացնեն թյուրքիայի և Սովետական Հայաստանի միջև:

Հիտլերյան Գերմանիայի դեմ սովետական ժողովրդի մղած Հայրենական պատերազմի շրջանում, երբ մեծագույն վտանգ էր սպառնում Սովետական Հայաստանի անկախությանը, ինչպես և Սովետական Միության մյուս ժողովուրդների անկախությանը, դաշնակ լիդերները մի նոր, հրեշավոր գործարք կնքեցին հայ ժողովրդի թշնամիների հետ: Դաշնակները ոչ միայն խայտառակ պայմանագիր կնքեցին Հիտլերի հետ, որով ֆաշիստական Գերմանիան հաղթելու դեպքում Սովետական Հայաստանը հանձնելու էր ֆաշիստական Գերմանիայի լիակատար հովանավորությանը և դրանով իսկ Հայաստանը դառնալու էր գերմանական իմպերիալիզմի գաղութը, այլև հիտլերյան հորդանների դեմ սովետական ժողովրդի մղած պատերազմի ժամանակ դաշնակցան բանդաները դավաճան Դրոյի գլխավորությամբ, թյուրք սպաների հետ միասին, դատաստան էին տեսնում Ղրիմի և Հյուսիսային Կովկասի ժողովուրդների, այդ թվում և հայերի նկատմամբ:

Հետպատերազմյան շրջանում, մասնավոր ներկայումս, երբ ամերիկյան իմպերիալիստները, ուժեղացնելով Սովետական Միության և ժողովրդական դեմոկրատիայի երկրների դեմ նոր պատերազմ բողոքելու իրենց ազդեցիկ քաղաքականությունը, ռադիկալիստական պայքարողներ են ստեղծում ՍՍՄԿ-ի սահմանների մոտ, թյուրքիային ակտիվորեն պատերազմի են պատրաստում Սովետական Միության դեմ, դաշնակներն իրենց ամերիկյան հովանավորների առաջադրանքով ակտիվացնում են իրենց գործունեությունը Մերձավոր և Միջին Արևելքում:

Դաշնակ լիդերները անմիջականորեն մերձենում են թյուրք ռեակցիոներներին և նրանց հետ միասին ակտիվորեն են ցուցաբերում ամերիկյան ու թյուրքական կառավարող շրջանների

ազդեցիկ պլաններն իրականացնելու գործում: Դաշնակները թյուրք ռեակցիոն գործիչների հետ միասին արաբական երկրներում հանդես են գալիս որպես ամերիկյան իմպերիալիզմի գործակալներ: Նրանք իրենց լրտեսական-դիվերսիոն գործունեությունը երտտորեն համաձայնեցնում են Միդիայի, Լիբանանի, Իրաքի, Իրանի, Անգոհորդանի և այլ երկրների թյուրքական գործակալների գործունեության հետ: Արտասահմանյան հայ պրոպագանդիստները հետաքրքիր փաստեր է բերում, որոնք ցույց են տալիս դաշնակների և թյուրք ռեակցիոներների սերտ համագործակցությունը ուղղված Մերձավոր ու Միջին Արևելքի ժողովուրդների շահերի դեմ: Դաշնակ գրչակները, իրենց շեֆերի ցուցումով, վերջին ժամանակներս սկսել են ներբողներ ուղղել թյուրքիայի հասցեին, մի շարք բարեկամական ռեկերաններ են կատարում թյուրքիայի առջև:

Նրանք իրենց այդ սուր որակով այնքան առաջ դնացին, որ սկսեցին գովարանել թյուրքական բարքերը, թյուրքական կինոնկարները: Արտասահմանյան հայերին մոլորեցնելու և միաժամանակ թյուրք ռեակցիոներների առջև իրենց ծառայական նվիրվածությունը ցույց տալու համար դաշնակները սկսել են գովարանել թյուրքական «դեմոկրատիան», աշխատում են արտասահմանյան հայերին ներշնչել այն միտքը, թե արդի թյուրքիան նույնիսկ պատրաստ է իր դուրերը բանալ արտասահմանյան այն հայերի առջև, ովքեր կցանկանային թյուրքիա տեղափոխվել մշտական բնակություն հաստատելու համար, թե թյուրք ռեակցիոներները հայերի թշնամիները չեն: Դրանից հետո զարմանալի չէ, որ այժմ թյուրքական ռեակցիոն թերթերը և զործիչները սկսել են ավելի ու ավելի գովարանել իրենց դաշնակ գործակիցներին, կոչ անելով ուժեղացնել պայքարը Մերձավոր ու Միջին Արևելքի և այլ երկրների պրոպագանդիստական հայ կազմակերպությունների ու մամուլի դեմ: Դաշնակների այդ բացահայտ եղբայրացումը թյուրք ռեակցիոներների հետ անդկանք և ցա-

սում է առաջացնում արտասահմանյան հայ աշխատավորների մեջ: Եվ որքան ավելի են ուժեղացնում դաշնակները իրենց պայքարը Սովետական Միության և Սովետական Հայաստանի դեմ, ժողովուրդների խաղաղության և անվտանգության դեմ, որքան ավելի են ծափահարում թյուրքական բաշխողներին, այնքան ավելի սերտորեն են համախմբվում արտասահմանյան հայ աշխատավորները Սովետական Հայաստանի, Սովետական Միության շուրջը, ուժեղացնում են իրենց պայքարը խաղաղության և դեմոկրատիայի համար:

Հայերում (Միդիա) լույս տեսնող հայկական «Սուրիա» թերթը, մերկացնելով դաշնակներին որպես հայրենի թշնամիների, գրում է.

«Ամեն հայ... հնարավոր բոլոր միջոցներով հայկական շրջանակեն հետո պետք է պահե դաշնակցություն հոսող ամեն բան, որովհետև դաշնակը հայ չէ և չի կրնար ըլլալ:

Դաշնակը երեկ Սուրիո մեջ ֆրանսացի էր, այսօր անգլո-սաքսոն, վաղը կրնա թուրք ըլլալ, բայց երբեք հայ կամ սուրիացի...

Մեն մի հայ սրբազան պարտականությունը պետք է նկատել խիզախորեն և անխնայորեն կրակել լեզվով խարանելու ժամանակավրեպ ափ մը այդ հայրենադավները և օտարին գործակալները, բեմի վրա, թե մամուլի մեջ, տան մեջ, թե փողոցի վրա հավասարապես:

Դաշնակցությունը հայրենի դուրս: Ինչ վերաբերում է դաշնակյան լիդեր Դարբինյանի ռազմատենչ զառանցանքներին, որոնցով նա կոչ է անում պատերազմ սկսել Սովետական Միության դեմ և երազում է միացնել Սովետական Հայաստանի տերիտորիան ֆաշիստական թյուրքիային, մենք, սովետական մարդիկ, հանգիստ ու վրձատահ ասում ենք իմպերիալիզմի այդ վարձկանին՝ «Չեղբերդ կարճ են, սույնը ձեզանից չի կախված»:

Գ. ՆՆՈՂՈՍՅԱՆ